ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1963 Общественные науки

Շ. Շահնազարյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐԶՆՑԻՆ ԵՎ ԻՐ ՍԱՂՄՈՍԱՐԱՆԸ

Առաջին հայերեն գիրքը՝ Պարզատոմարը հայ տպագրության հիմնադիր Հակոբ Մեղապարտը տպագրեց 1512 թ. Վենետիկում։ Ապա Աբգար դպիրը շարունակող հանդիսացավ այդ գործի և 1565 թ. տպագրեց մի Սաղմոսարան։ Հայ գրքի տպագրության հաջորդ նախահայրը Հովհաննես Տերզնցին է։

Խանեսի և Մարիամի որդի «ուսյալ քահանա» Հովհաննես Տերզնցին ծնվել է Տիգրանակերտում։ Նա 1583 թ. այրի և չքավոր վիճակում իր որդի Խաչատուրի հետ հայ տպագրության գործով զբաղվելու նպատակով մեկնում է Հռոմ։ Այստեղ նա հանդիպում է Աբգար դպրի որդուն՝ Սուլթանշահին, որի հետ ընկերանալով, իտալական մի տպարանում 1584 թ. տպագրում է Գրիգոր 13-րդ պապի լատիներեն գրված տոմարի հայերեն թարգմանությունը «Տաւմար Գրիգորիեան Յաւիտենական...» վերնագրով։ Իտալական այս տպարանը, ըստ երևույթին, հարուստ փորձ ու հնարավորություններ ունեցող մի աշխատանոց էր, որի շնորհիվ էլ Գրիգորյան տոմարը շնորհքով, սև ու կարմիր թանաքով, զարդագրերով, զարդափակ էջերով հաջող տպագրություն է։ Դրանից բարեբախտաբար 2 օրինակ պահպանվել է Մատենադարանի հնատիպ գրքերի շարքում (Հնատիպ գրականության հավաքածու № 29, 30)։ Այդ տոմարից չկա Հայաստանի որևէ այլ գրադարանում։

Այս տոմարը տպագրելուց հետո Հովհաննես Տերզնցին ցանկանում է հայրենիք վերադառնալ, բայց անհասկանալի պատճառով ճանապարհորդության քսաներորդ օրը նրան ձերբակալում են և բանտարկում։ Թեոդիկը հիշատակում է, թե նրան բանտարկել են այն մեղադրանքով, որ փորձել է իր ձեռք բերած նոր արհեստը հայրենիք տեղափոխել[1]։ Ոմանք նրա բանտարկությունը համարում են թյուրիմացություն, որովհետև կարճատև ժամանակամիջոցից հետո նա ազատվում է բանտից և Վենետիկում ազատ աշխատելու իրավունք է ստանում։ Նա Վենետիկում իր որդի Խաչատուրի հետ նորից զբաղվում է իր սիրած գործով և Ջուան Ալբերտի տպարանում տպագրում է մի Սաղմոսարան։

Տպագրության տեսակետից վերին աստիճանի աղքատ, բայց հետաքրքրական նմուշ է այս Սաղմոսարանը։ Իր տառանիշերով, տպագրության արվեստով, էջերի ձևավորումով, կազմով այն շատ նման է ձեռագրի։ Այդ տպագրությունը ցույց է տալիս, թե ինչպիսի անհարմար ու ծանր պայմանների հաղթահարումով է լույս տեսել։ Դա նկատելի է անկանոն էջերից, տառերի դասավորումից, թանաքի գույնից, լուսանցքների անհամաչափությունից։ Գրքի մամուլները բաղկացած են 8-ական թերթից, որոնք համարակալվում են հայկական, իսկ մամուլի էջերը լատինական տառերով։

---

1 Թեոդիկ, Տիպ ու տառ, Կ. Պոլիս, 1912, էջ 42։